ի հայկերոյթս ընդ վանահօրն և ի միասին կառավարել եղբայրաբար, յայնդէպս ի նշանակեալ ուճիկ ձերմէ պարտիք յանձնել վանահօրն զմի հարիւր ռուբլին, որէ ամսական ութ ռուբլի ի պէտս ծախուց սեղանոյ, զի հնարաւոր լիցի վանահօրն հոգալ զծախս սննդեան ձերոյ, և յայնժամ զթէյն ունիք առանձին պատրաստել տալ ի հաշիւ ձեր, զի ի ցանկացեալ և յաղատ ժամս կարասջիք վայելել։ Իսկ թէ ցանկանայցէք ըստ կամս ճաշել և ընթրել առանց մասնակցութեան վանահօրն՝ յայնժամ կարէք ստանալ լրիւ զ400 ռուբլի ուճիկն։»

Ըստ որում հարկաւոր էր վիճակային ատենի մէջ եւս լինել այս ամենի մասին տեղեկութիւն. ուստի և յ3 սեպտ. հմ. 234 հաղորդեցի և վիճակային ատենին հետեւեալ առաջադրութեամբս։

Հմ. 234
3 սեպտ. 1888 ի Շամախի

Վիճակային ատենի Հայոց Շամախւոյ թեմի

ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ

Կարեւոր համարիմ ի գիտութիւն ատենիդ յայտնել թէ՝ համաձայն կոնդակի Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց՝ տուելոյ ի 6 ապրիլի տարւոյս հմ. 146, ունիմք բանալ ի վանս Սաղիանի զվանական դպրոց, որը վասն և հրաւիրեալ իմ զբարձրապատիւ Մակար վարդապետն Բարխուդարեանց ուսուցիչ Հայոց լեզուի և կրօնի, և զպ. Սահակն Տէր Գրիգորեանց ուսուցիչ ռուսաց լեզուի և թուաբանութեան, որոց իւրաքանչիւրոցն յատկացուցանելով ի տարին զ400 ռուբլի ուճիկ, իսկ ուսուցիչ երգեցողութեան առ այժմ ոչ գոյ։

Համաձայն չորրորդ յօդուածոյ կանոնադրութեանն հաստատելոյ ի Նորին վեհափառութենէ հմ. 147, ընտրեալ եմ ի պաշտօն հոգաբարձութեան վանական դպրոցին զպարոն Մովսէսն Բուդաղեանց իբրաւամբ շնորհելոյ Բուդաղեան եղբարց զտասն հազար ռուբլիս յապահովութիւն վանական դպրոցին, որը վասն և անուանի «Բուդաղեան վանական դպրոց Սաղիանի վանից»։